

նին մէջ, Արեւիկան քրիստոնէից վիճակին բարեօրոյն մը, Այս մարդասիրական զգացումն անկեղծ է: Եթէ իրօք անկեղծ է, Հայոց նկատմամբ ցոյց տրուած անտարբերութիւնը չը կրնար բնաւ արգարանալ:

«Հայք աշխարհի ամենէն հին ժողովուրդներէն մին են: Հաղարատ որ տարիներ անկախութիւն վայելած են: Նոր (Փրկչական) թուականին սկիզբէն ի վեր քրիստոնեայ են, և թուրքիոյ ամենէն կարեւոր տարրերէն մին կը կազմեն: Իրենց թիւն Ասիոյ մէջ՝ առ նուազն՝ ըստ ամենէն աննպաստ հաշուոյ՝ երկու միլիոն է. հետեւաբար Եւրոպական թուրքիոյ յոյներէն բազմութիւն են:

«Կրթութիւնն աւելի տարածուած է իրենց մէջ՝ քան ուրիշ բոլոր արեւելեան ժողովուրդոց, ի բաց առեալ Յոյներն: Արեւելից և Եւրոպիոյ խաղաղութիւնը վրդոված չեն երբէք, աւելի կը սիրեն իրենց ներկայ տէրերէն և քրիստոնեայ ու մարդասէր Եւրոպայէն սպասել իրենց դարաւոր տառապանաց վախճանը, զորս տաւրն տարիէ ի վեր իրենց կառավարչաց, և երկու տարիէ ի վեր ալ Եւրոպիոյ ցոյց տալէ չեն դադարել: Բայց եթէ իրենք Արեւելեան խնդրոյն պայմանն և անոր սարսափելի հետեւանքներուն տուիթ չտուն, կըրնան ստիպի տարր մ'ըլլալ այնպիսի լուծմանց, որք Սոսիոյ կողմէն ծանր դժուարութիւններ և Սնդիոյ ու Ռուսիոյ մէջէն դժուարութեանց առիթներ անհրաժեշտ են: Բաւական է որ Անգլիոյ՝ պետական մարդիկն յանձն առնուն Հայոց վրայ ալ զբաղիլ և անոնց խնդրոյն գործնական կողմը քննել այն հաշտասէր և իրաւախօսական աշխարհավարութեան տեսակէտով՝ զոր ներկայ անցքերը կը պահանջեն:»

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՍԻՆ ՊԱՇԱՏԱՐԱՆԵՐԸ

Դադողական Տէպա լրագիրը վստփորի նեղցին ամբողջութեան վիճակը նկարագրող նամակ մը հրատարակելու առթիւ Կ. Պոլսոյ կրած բոլոր պաշարմանց ցուցակը կը հրատարակէ: Թէ՛ Բիւզանդիոն կոչուած ժամանակ և թէ մեծն Կոստանդնուպոլսէն վերաշինուելով Կ. Պոլսի կոչուելէ ետեւ:

Առաջին պաշարումն եղաւ Բրիտանոսէն 1777 տարի առաջ, Սպարտացուց Պաշտանիս թագաւորին ձեռքը, Պաշտանի ճակատամարտէն քիչ ժամանակ յետոյ, և Բիւզանդիոն Սպարտացուց ձեռն ինկաւ: 67 տարի ետքը նորէն պաշարուեցաւ Աթենացուց Աղկիրաքէն զորապետէն Պեղսպոնէսեան պատերազմին ժամանակ: 63 տարի ետքը դարձեալ պաշարուեցաւ Մակեդոնացուց Լեոն զորապետէն՝ Մեծին Աղեքսանդրի հօրը՝ փրկիպպոս Մակեդոնացիին թագաւորութեան օրով: Բրիտանոսի 196 թուին Հռոմայեցոց Սեպտիմիոս Սեվերոս կայսրը սպարաբեց՝ իւր հակառակորդ Պիկանինոս Նիգերի տուած օգնութեան համար պատժելու նպատակաւ: Բիւզանդիոն մինչև ցյոյտին կէտ ընդդիմացաւ և սովորուել ըլլալով անձնատուր ըլլալու հարկադրեցաւ: Սեպտիմիոս կայսրը քաղաքին պարիսպները քանդելով՝ պարզ աւանի մը կարգ ինչոց զայն: Կարապալլաս կայսր օրով վերականգնեցաւ: Ծառ չանցած՝ Կոստանդնուպոլս կայսրը զայն մեծցուց, շքեղացուց և իւր անուամբ Կոստանդնուպոլս անուանելով՝ 322 թուին կայսրութեան երկրորդ մայրաքաղաք ըրաւ: Կոստանդնուպոլս ինքն ալ իսթին տարի առաջ պաշարած էր զայն:

Ասկէ ետեւ Կ. Պոլսոյ կրած պաշարումներն են հետեւեալը:

593 թուին Ավարներէն պաշարեցաւ: 626 ին Ավարներէն և Պարսիկներէն: 636 ին՝ Արաբաց Ալի-խալիֆային Մօրվիէ զօրավարէն: 668 էն 675 Արաբներէն: 717 ին և 744 ին դարձեալ Արաբներէն: 753 ին և 764 ին Պուլղարներէն: 786 ին Հարսան—Լէ—Րաշիա խալիֆայէն: 798 ին Կպիպոսի Ապաիւ Մէլէք Սուլթանէն: 811 ին և 820 ին Պուլղարներէն: 886 ին Ռուսներէն: 914 ին Պուլղարաց Սիմէոն թագաւորէն: 1048 ին Կոստանդին Մոնոմաքոս կայսրը դէմ աղբտառաքող Տորնիսիտէն: 1081 ին Ալէքսանդր Կոմնենոսէն, որ յետոյ կայսր եղաւ: 1204 ին չորրորդ խաչակրութեան զլուխներէն, որք առնելով Արեւելեան Լատին կայսրութիւնը հիմնեցին: 1261 ին Միքայէլ Պալէոլոգէն, որ Լատինացուց կայսրութիւնը կործանեց և Յունական իշխանութիւնը վերահաստատեց: 1396 ին և 1402 ին Սուլթան Պայազիտ Ա. էն: 1413 ին անոր Մուսա որդիէն: 1422 ին Սուլթան Մուրատ երկրորդէն: վերջապէս 1533 ին Սուլթան Մէհմէտ Բ. էն, որ նոյն տարւոյն մայիս 17/29 ին առաւ, և այն օրէն ի վեր Կ. Պոլսի Օսմանեան իշխանութեան ներքեւ մնաց:

ՕՍՄԱՆ ՓԱՇԱ

ԵՒ

ԿՈՒՍԻ ԹՊԵՍԿԻՅԵ

Բեգրուպուրիկ Կոլոս (ձայն) լրագրին թղթակիցը Խարքով մէջ Օսման փաշայի հետ ըրած տեսակցութեան վրայ հետեւեալ հետաքրքրաշարժ տեղեկութիւնը կուտայ:

«Խարքով քաղաքը հասնելուս պէս՝ փութացի իրիկուան ժամն երկուքին Օսման փաշային նստած տունն երթալ, իւր բժիշկը՝ Հասիպ պէյ՝ զիս դիմաւորելով ըսաւ թէ Միւշիլը կէս օրէն մինչև ժամը 10 մարդ կընդունի: Ասոր վրայ աղաչեցի Հասիպ պէյին որ Բուրսք քաղաքէն Ատիլ փաշային ինձ առած նամակն Օսման փաշային տայ իմացնելով որ ես վաղը նորէն պիտի գամ:

«Հետեւեալ օրը ճիշդ կէս օրին Միւշիլին դահլիճն էի: Քիչ մ'ետքը դուռը բացուելով, ինքզինքս Բլէվնայի պաշապանին առջև գտայ: Բաղմիցի մը վրայ նստած էր ուսուց—գաղղիական երկու բառքերէն մէջ տեղը: Հասիպ պէյ մեծ քաղաքավարութեամբ թիկնաթու մը յառաջ քշելով՝ նստելու հրաւիրեց զիս: Երբոր ըսի Օսման փաշային թէ Կոլոսի թղթակիցն եմ, իսկոյն Կոլոսի 24 թիւը ինքերեց և Նովկորոսէն գրուած նամակ մը ցուցնելով հարցուց:

—Այս նամակը դուք գրած էք: —Առաջին նամակս է, պատասխանեցի: Իմ պաշտօնն է թուրք գերիներուն բնակած քաղաքները պարտիլ, և ամենէն առաջ Նովկորոս գրեանցի: Նամաթիկնակ նամակներ պիտի կարգաք նաև Մոսկուայէն, Օրէնէն և Գուրսքէն գրուած: Կրնամ իսկ ըսել ձեզ որ մեր այժմու խօսակցութիւնն ալ բաւ առ բաւ պիտի հրատարակուի:

—Բռնէ ինձ, կաղաչեմ, ճշմարիտ է որ ամեն լրագրերէն Կոլոս միայն արդարութեամբ խօսած է մեր զօրաց վրայ:

—Ճշմարիտ է: —Ինչ է պատճառն, հարցուց Միւշիլը:

—Պատճառն այն է պարզապէս, որ Կոլոս լուրջ լրագիր մ'է: Պատերազմի պէս ծանր խնդրոյ մը մէջ թիկնաթութեամբ գաղաղութիւն ընելն ոճիր մ'եղած կըլլար: Ինչպէս որ փորձն ալ լիովին հաստատեց: Ասկէջ զատ

Կոլոս ուրիշ խնդրոց մէջ ալ Ռուսական միւս լրագրաց պէս թթու հայրենասիրութիւն մը ցոյց չտուաւ: —Բէթէրագուրթի վէտօմօթի լրագիրն այդ ձեռք բաժնի թթու հայրենասիրութեան միջեալ էր, ըսաւ Օսման փաշան, երբոր հրատարակեց թէ ես Բլէվնայի մէջ 150 Ռուս զերի ողջ ողջ թաղել տուած եմ: Կերևի որ այդ լրագիրը չդիտելով Միւշիլ գուրսն իւր բանակէն մեր ձեռքն ինկած գերիներն աղէկ նայել տուած ըլլալուս համար չնորհակալութիւն յայտնեց ինձ: Սեկեղծաբար կը խոստովանիմ ձեզ թէ ես այդպիսի թըշնամանք մը չէի սպասել Ռուս լրագրաց կողմէն: Կը կարծէի թէ այն մարդն՝ որուն Ռուսիոյ կայսրն ետ տուաւ իւր սուրն, որ և է լրագրոյ մը կողմէն այդպիսի ամբաստանութեանց ենթարկուելէ ազատ պէտք էր ըլլար: Ես երբոր Երեկայի մէջ գործուած սնդութեան իմաց իմացայ, իսկայն գրեցի Բեռլին փաշային որ ճշմարտութիւնը ծանուցանէ ինձ: Նա ալ պատասխանեց թէ Ռուսերը Բուսնիլի մէջ թուրքերէն հարկաւորապիսի աւելի անգթութիւններ գործած էին: Կը տեսնէք ահա որ ես թուրքերը չեմ արդարացներ: Բայց ձեր խաղաղութեան համար ալ աղէկ չեմ կրնար ըսել: Ռուսերը Պուլղար գերիներէն իմացան իմ անոնց նկատմամբ բռնած ընթացքս, և կը կարծեմ թէ չկրնին այնպիսի բան մը գտնել որ կարենար որ և ինչ մէկու մը իրաւունք տալ զիս վայրագ գաղանի մը հետ բաղդատելու:

«Օսման փաշան հառաչք մ'արձակեց և ձեռքովը շորժում մ'ընելով՝ աւելցուց. —Ուրիշ խօսք ընենք: Նոր ինչ կայ:»

«Ես ալ Պապին մեռնիլն, անգլիական նաւատորմին վստփոր մտնելն և Միւշիլ փաշային Կ. Պոլսի վերադառնալու հաւանականութիւնն իմացուցի իրեն:

—Կը կարծեմ որ, ըսաւ, եթէ զինադադարն իւրօք կնքուած է, որ և է նաւատորմի մը թոյլ չտրուիր վստփոր մտնել:»

«Պատերազմին պատճառներուն վերայ Օսման փաշային կարծիքը բաւական տարօրինակ է: Պուլղարիոյ մէջ տպատառութիւն քարոզուելուն վերաբերեալ քանի մը քաղաքական մանրամասնութեանց մէջ մտաւ:

—Պատերազմին այնչափ կնճռոտութեան ու երկրորդական պատճառն, ըսաւ, ձեր կառավարութեան տրուած սխալ տեղեկութիւններն էին, որոց նայելով Ռուսական միակ զօրաբանակ մը (30-40000 զօրք) բաւական պիտի ըլլար մեր բանակները ջնջելու և թաւրթալ ջախջախելու: Իրականութիւնն հաստատեց որ միայն Բլէվնայի համար 200000 մարդ բաւական չէին, և մեք կրնայինք Բլէվնայէն յաջորդութեամբ դուրս ելնել՝ եթէ Ատիլ փաշան իւր վերջապահ գունդերով ու ճիւղերով չըլլար: . . .

«Այդ, պարսնի թղթակցի, տուական ինչ բանով կ'նամ՝ հաճելի ըլլալ ձեզ:

—Կը փափաքեմ որ քանի մը կինստաբական տեղեկութիւն տաք ձեր վրայ:

—Ինչ կըսէք, կենսադրութիւնն ծանօթ չէ՞ ձեզ: Ձեք զիտներ ջէ ես Պապէն եմ, թէ Անտարկտիկայի կին մ'ե երեք աղջիկ գուռակ ունիմ: որոց մին փարիզ սրճարանի մը մէջ երգիչ է, երկրորդը Լոնտոնայի թատրոններուն միայն մէջ կ'աղաչէ: Ե, երրորդն ալ Բեգրուպուրիկի մէջ տարփուհի մը . . . հա՛հ, հա՛հ, հա՛հ . . . արժանաւոր ժառանգներ, այնպէս չէ՞, հօր մը, որ իւրեւ հայրենեաց

մատնիչ ամբաստանուած է: Ո՛չ, էֆէնեան, ոչ, ես տառնցմէս ոչ մին եմ: Ես պարզապէս Անտարկտիկայի թուրք մ'եմ: Երբեք չեմ քաղաքէն: Ռուսներն քան Կ. Պոլսոյ զինուորական վարժոցն ըրած եմ, և անկէջ երևելս ի վեր զինուորական պաշտօնակալի թաւառական կեանքը կը վարեմ: Եթէ մենի Արաբաց դէմ: Պոսնիոյ մէջ, Հէրսէքի մէջ պատերազմեցայ, և Զայաթի տուլի Զէրնայէֆ զօրավարին հրամայած Սերվիսցուց և Ռուսաց յաղթելէս ետեւ՝ Միւշիլի տիտղոս ստացայ: Ահա այս է իմ կենսագրութիւնս:

—Բռնէ ինձ, կաղաչեմ, թուրքերը Բլէվնայի մէջ Ռուսաց չափ քաջութեամբ կուռեցան:

—Խիստ փափուկ հարցում մը կընէք ինձ, որուն շատ հրամանատարք պատասխանելու դժուարութիւն կը կրեն, ըսաւ: Ձեր զօրքերը թարմ էին, մինչդեռ իմիններս գրեթէ ամենն ալ պահեստի զինուորներ էին: պէտք է արգար ըլլալ: Ասկէջ զատ՝ մեք պաշտպանողական պատերազմ կընէինք, իսկ դուք յարձակողական: Մերն աւելի դիւրին էր. Հաղիւ Բըլէվնա մտեր էինք Ռուսերը մեր վերայ յարձակիլ սկսան: ուստի պատառուած էինք զմեզ պաշտպանել չէ միանգամայն աւարացնել: Առաջին պատերազմը խիստ դժուար եղաւ ինձ համար, վստփ զի դու չէի ճանչիր թշնամիս: Երբոր յարձակումը վանեցինք և ինքզինքնիս ամրացուցինք սիրտս բոլորովին հանդարտեցաւ, և իմ անձնատուութիւնն իսկ անկարծական երեցաւ ինձ: այնչափ հաւատք ունէի իմ ստաբիս վրայ: Սակայն անձնատուութեան անկարծականութիւնն այնչափ տպաւորութիւն չըրաւ իմ վրայ՝ որչափ առաջին աւուր յարձակումը: այն է յուլիս 18 ի: Բայց ինձ համար ամենէն հաճոյական օրն էր այն օրն՝ յորում կայսրն և մեծ դուքսն իմ քաջութիւնն ու վարժութիւնն օգովեցին, թէ և այդ գովեստներուն արժանի ըլլալու ջանք մը բնաւ չըրի:»

Պէլլուտէն մարտ 1 թուով հետեւեալը կը գրեն թաղմը լրագրին:

«Սէմէնարիայի մէջ երեկ իրիկուն քառասունէ մէկ պատուաւար քաղաքացիք բանտարկեցան: Տեղական իշխանութեանց խօսքին նայելով, Միւշիլ իշխանին կենաց դէմ դաւաճանութիւն կը նիւթեն եղբոր: Այս պատճառաւ իշխանն ալ առանց Եսկոփնա կամ Սէմէնարիա երևել՝ Միւշիլի ցոյց գնացեր է Սերվիսական Տէրիլիատ շողեհաւով: Բարայիլի և Խաղոտիսայի մէջ ալ բազմութիւն մարդիկ ձերբակալուելու են:»

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հուլիս 10 մարտ. Երեսփոխանաց Ժողովը Պ. Քաջուրիին իրեն նախագահ ընտրելուն պատճառաւ նախարարութիւնն հրաժարական տուաւ: Թաղաւորը Պ. Քաջուրիին յանձնեց նոր նախարարութիւն մը կազմել: Կրտսէ թէ արտաքին գործոց նախարարութիւնը Զիւլայիին կամ Տուրանտո զօրավարին և կամ Պ. Տէրէթիլի պիտի յանձնուի:

Վիլնիս 10 մարտ. Տէրութեանց Ժողովն հաւանականաբար Պէլլին պիտի դուռնար ընդ նախագահութեամբ: Պիտարք իշխանին: Կաղաղիւ և Թուրքիա պիտի մասնակցին:

Վիլնիս 11 մարտ. Աւստրիական պատուիրակութեան ելմբական յանձնաժողովին մէջ Անտարկտիկայի յայտնեց թէ կառավարութիւնը Պոսնիոյ գրաւելու դիմաւորութիւն չունի: Աւստրիա պատերազմին առաջ իւր շահերը ցոյց տուաւ Ռուսիոյ, և արդար ձանձուեցան: Կառավարութիւնը՝ 60 միլիոն ֆիորինի վարկը շնորհուրեւն պէս գործերը շարժուն վիճակի մէջ դնելու դիմաւորութիւն չունի, այլ այդ վարկը կը խնդրէ միայն ցուցնելու համար աշխարհի թէ Աւստրիա կարող է իւր շահերն իրօք

պաշտպանել և Բայց տեղում եւանց ժողովայն գումարումն առաջ, յորմէ գոհացողն լուծում մը կը յաւանդուի ամեն կողմանց համար, զորքերը շարժուն վիճակի մէջ դնել և յետոյ նորէն նստուցանելը կատարելի ընթացք մ'ենթադրուի, որոյ պատասխանատուութիւնը չկրնար իւր վրայ առնուլ կատարութիւնը: Հետեւաբար Անտարասի կողմը սուտ հանեց Աւստրիոյ դիւտուրական պատրաստութեանց վերաբերեալ բոլոր լուրերը:

Վիեննա 12 մարտ.
Հունգարական պատուիրակութեան յանձնարարողը միաձայնութեամբ ընդունեց Անտարասի կողմին խնդրած վաթսուներկու ֆիդիուսի առաջարկութիւնը:

Բեղրադ 13 մարտ.
Ինկաթիկի զօրավարն Բէնիֆ փաշան երկէկ իրիկուն Օտէսա հասան, և վաղը Բեղրադուրի կ'ապաստուին:

Լոնտոն 12 մարտ	
Օսմ. Քօնս.	8 3/8
Փոթ.	1865 8 1/2
»	1869 8 1/8
»	1871 35 1/2
»	1872 13 1/2
»	1873 8
» Եղիպտ.	55 1/4
Անգլ. Քօնս.	95 7/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներքու մեծ գումարն առ վեհ. Սուլթանն տալիք այցելութիւնն հետեւեալ կերպիւ պիտի ըլլայ կըսէ ընթացիկ լրագիրն, որոյ տուած լուրերը միշտ երաշխաւորութեան կտրուտ են՝ Պատրիսթի տուած լուրերուն պէս:

«Մեծ գումարն յետոյն չափ ըստ պայից հետ չողակտաւ. քով Եէտի գումարն պիտի գայ, ուր սպասող արքունիկան կառքեր դնին ու հետեւողներն առնելով Բէնիֆ տանէ պիտի տանին. հոն մեծ գումար ձի նստելով՝ ելլալով քէօլի պիտի գայ այցելութիւն տալու Սուլթանին: Անկէջ Տօլմա-Պազազէի պալատն իջնելով նախաճաշ պիտի ընէ, և վեհ. Սուլթանն ալ հոն պիտի երթայ փոխադարձ այցելութեան:»

Կիրիսի զօրաց հրամանատար Օսման Նուրի փաշան երկուշաբթի օրը Կիրիս քաղաքին վրայ զօրք և թընդանօթներ տանելով իւր հետ:

Կրսուի թէ ուրիշ զօրագունքեր ալ այսօր վաղը ճանաչալ ելնելու վրայ են, որով կայսերական կառավարութիւնը քիչ օրէն 25000 զօրք պիտի ունենայ Կիրիսի մէջ:

Երեքշաբթի օրն հինգ Ռուսական չափեաններ եկան Կ. Պօլս, երեքն Օտէսայէն, և երկուքը ճերմակ ծովէն, ուր իտալիոյ նաւահանգիստները փակուած կեցած էին պատերազմին պատճառաւ:

Պատրիսթ կը ծանուցանէ թէ արտաքին գործոց նախարար Վոսիմ Սաֆվէթ փաշան Պէրլին գումարուելիք տեղութեանց ժողովին համար Օսմանեան առաջին պատուիրակ և Պէրլին Օսմանեան գեղական Սատուլիւհ պէյ ալ երկրորդ պատուիրակ պիտի անուանի:

Յունական վիզայի լրագիրը լուր կուտայ թէ Ռուսիոյ կառավարութիւնը կազմել Օսման փաշային արտօնութիւն տուել է՝ որ առանց հաշտութեան դաշնագրին վաւերացմանն սպասելու Կ. Պօլս վերադառնայ. հետեւաբար Օսման փաշան մօտ օրէն Կ. Պօլս պիտի հասնի:

Յունաց պատրիարքին հիւանդութիւնը վերադառնալու Երեքշաբթի օրը բժշկաց խորհրդակցութիւն մ'ենթադրուի Պատրիարքութեանը:

Մայրաքաղաքի մէջ և շրջակայները կենդանաց ժանտախտ երևան

ելած և սոյն վտանգաւոր հիւանդութիւնն արտաւոր կենդանաց միւս ուտողներուն ալ հազորդաւոր լլլալով, ստիկանութեան նախարարութիւնը, քաղաքապետութիւնն ու առողջապահական տեսչութիւնը խորհրդակցութեամբ որոշեցին հիւանդ կամ արտաւոր կենդանաց միւսերուն վաճառումն արգելել: Այս նշանակաւ բժիշկներ ու տեսչներ որոշեցան մնալաճառաց խանութներուն, ճաշարաններուն, քէպապ-ճիներուն և այլ մանրէն վաճառողներուն վրայ փութալան հսկողութիւն ընելու համար:

Հիւանդ, արտաւոր կամ հոտած միւսերն առնուելով ծովը պիտի նետուին և վաճառողներէն ալ վեց հատ քաղաք մէջիտիէ տուգանք պիտի առնուին:

Կայսերական հրամանաւ՝ իզմիրի նախորդ կուսակալ Սապրի փաշան Ափրիկեան Տրիպօլիտ կուսակալ անուանեցաւ:

Ֆերիք Ֆուատ փաշան Կ. Պօլս իսկիւնարի և Պէշիկիմալի դիւտուրական կառավարիչ անուանեցաւ:

Ղալիպ պէյ Մուշի կառավարիչ անուանեցաւ:

Արտաքին գործոց նախարարութեան նախկին Մէքթուպճի Բէֆէթ պէյ վերստին նոյն պաշտօնին անուանեցաւ փոխանակ խալիք Բէֆէթին որ Էվլաֆի Մէքթուպճի անուանեցաւ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ	
1 մարտ չորեքշաբթի իրիկուն	9.2
2 մարտ հինգշաբթի առաւօտ	9.5
բացուեցաւ	9.7
ժամ 6 ին	
Բուռլիի երկաթուղի	Փր. 29 50
Թղթաղարմ	Լր. 282
ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵՂՈՅՑ	
Կ. Պօլս 1 Մարտ	
Ստիկի թէ լէնդալի բաժ. Անգլ. Լիւ.	3. 8
» փոխանակութեան	2. 5
Կ. Պօլսի Պաշտպանի	3. 8
Քրիստի թէ լէնդալի	2. 10
Քրիստի Օսթրո-Թուրք	—
Փոթ.	1863 40
»	1865 44
»	1869 39
»	1872 13 50
»	1873 38

ԱՂԳԱՅԻՆ

Ս. Պատրիարք հայրն հետեւեալ շրջաբերական կոնդակն յաղարկեց թէ՝ մայրաքաղաքի և թէ գաւառաց բոլոր եկեղեցիներուն *:

ՆԵՐՔԻՆ ԵՄԱՍՏՑ ԲԻՐՈՍՏՈՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԻՆ ՍՏՈՒՆՈՒՅ ԱՐԲԵՊԻՍԿՈՓՈՍ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍՈՅ, Եկեղեցեաց Ստուծոյ՝ որ 'ի Մայրաքաղաքի և յամենայն հայաբնակ գաւառաց, ի քաղաքս, յաւանս և ի գիւղօրէն Թուրքիոյ, Գերապատիւ առաջնորդաց, Արժանապատիւ առաջնորդական տեղապահաց և Դեր-Առաջնորդաց, բարեկամն անդամաց երեսփոխանական, Կրօնական և Բաղաճական ժողովոց, Խորհրդոց և Հոգաբարձութեանց և առհասարակ բարեպաշտ ժողովրդոց մերոց սիրելի որդւոց մերոց 'ի Բրիտանոս մեծաց և փոքունց, ողջոյն, սէր, օրհնութիւն, խաղաղութիւն, խնդութիւն, ողորմութիւն, գթութիւն, մարդասիրութիւն և շնորհ շնորհողին Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Բրիտանոսի և ամենասուրբ Հոգւոյն բազմապիսի. Ամէն:

Բիւր գոհութիւն Աստուծոյ, որ վերջապէս իւր անհուն ողորմութեամբ հաճեցաւ երկու տարիներէ 'ի վերջաւ խորհ յաղաղ աշուտ և արեւադարձ պատերազմն աւարտել, և հաստատել

* Մայրաքաղաքի եկեղեցեաց մէջ կրօնի առաւօտ կարգադրուեցաւ:

խաղաղութիւնն՝ որում կարօտ էին յոյժ մարդիկ ամենայնիւ և յամենայնի:

Ուստի և կը հրաւիրեմք զամենայնի՝ զեկեղեցականաց համօրէն և զայսարհականս, որ յեկեղեցիս միաբան աղօթէք առ Աստուած ջերմեանդ. հաւատովք, որպէս զի Իւր անհուն ողորմութեամբն բարեհաճի ի դոյն ժամանակի ներկայ պատերազմին դործած աղէտքը կ'արմանել և աւերածոյքը վերականգնելու համար իւր Աստուծային բերարեղուն օրհնութիւնը շնորհել ի շինութիւն քաղաքաց և գիւղօրէնց և այլոց. ընդ որս և յայց ելանէ իւր անսահման գթութեամբն մեր Ազգիկն այս առթիւ կրած տառապանաց, և իւր յիշխութեան Ս. Հոգին զրկէ առ մեզ ի սփոխանս Եկեղեցւոյ իւրոյ:

Յորդորելով զեղբարդ մեր և զորդիս պատուէր տամք Ձեզ ամենեցուն, որ եօթն օր անընդհատ աղօթէք և պաղատանք մատուցանէք յեկեղեցիս առ Ամենազօրն Աստուծո՝ վասն անվրդով և հաստատուն խաղաղութեան ամենայն աշխարհի, վասն իսպառ բարձման վշտաց և տառապանաց ներեալ Ազգիս մերոյ և վասն յաջողութեան բարի և Աստուծո՝ հաճոյ աշխարհաշէն դործանութեանց՝ որ ի Բրիտանոս Յիսուս ի Տէր մեր:

Բաց ասոր բարձրադոյն հրամանաւ պարտ անձին կը համարեմք խրատել մեր ամեն դաւառարնակ ազգայիններն, և զանոնք՝ որ Մայրաքաղաքիս շրջակայքը կը բնակին, որպէս զի ժամ յառաջ անմիջապէս ձեռն ի գործ արկանեն ի մշակութիւն երկրի՝ ամեն տեսակ և առտո վարուցան ընելով, արմտիք և բանջարեղէն հասցնելով. վասն զի արդէն Օսմանեան երկրին մէջ մտաւ պատերազմի թատր հանդիսացած և սորա աղէտից մատնուած լինելով, այն տեղերու բնակիչք բնականաբար իրենց մշակութիւնը չափաի կարենան շարունակել. որով և պատերազմական վայրերէն հեռու մնացող գաւառաց ժողովուրդը կրկին պարտաւորութեամբ վարուելու եւ՝ թէ՛ իւրենց և թէ՛ իրենց եղբարց համար:

Այսպէս աշաւատիկ մէկ կողմէն աշխատողն իւր վաստակոց արդիւնքը կը վայելէ՝ շնորհիւ և յաջողութեամբ Տեառն, և միանգամայն միւս կողմէն անձաւորն կը դադրի և առատութիւնը կը տիրէ ամենուրեք շնորհիւ Աստուծոյ և շնորհիւ Ձեր աշխատութեան:

Ազգայնքը գլխահարկաւորն Աստուծո՝ պահել զձեզ յամենայն փորձութենէ այս ժամ և միշտ և յաւիտեանս. Ամէն:

21 փետրվար 1878 Միամ աղօթարար Պատրիարքարան Հայոց (Կիւի)
Ի Կ. Պօլս
Թիւ Կոնդակի 163



ՄԱՀԱԳՈՅԺ

Հարենց և Ֆնաղիւնի գերդաստանները զաւօք սրտի կը ծանուցանեն թէ Մեծ Հարենց Արարհամ էֆէնտի լծակից և Ֆնաղիւնի Մեծ Պետրոս էֆէնտիի զօրանչ Պաղբոս փանեան աղնաւօտ հի Լուսաբեր տիկինն այս առաւօտ իւր մահկանացուն կնքեց 'ի հասակի 60 ամաց: Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի վաղ՝ ուրբաթ՝ ժամ 4 ին Գաղաղիկի Ս. Թադ աւոր եկեղեցին, ուսկից հանդուրիւն մարմինն յատուկ շոգեհանաւ խաղաղ պիտի փոխադրուի:

ԱՌ ԸՆՏՐՈՂՍ

ԵՆԵՒԻՍԵՐՈՒՆ Ս. ԱՌԱՔԵԼԼՈՅ ԵԿԵԼԵՏԻՍՈՅ

Յառաջիկայ կիրակէ առաւօտ որ է մարտ 3, Եկեղեցարու Թաղ. խորհրդոյ նորոգ ընտրութեան համար Ամեն. Ալլաբազան Պատրիարք հօր կողմանէ հրահանգ եկած ըլլալով, ընտրողական ժողովուրդաւորն քուէ արկութեամբ 9 անձանց համար

եւապատիկ թուով 27 անձերէ հետեւեալ ցանկը պատրաստեց 'ի դիւտութիւն ընտրող թաղեցւոյն:

Անդրէաս Կարապետեան զրազիր Ալիքան Պէշիկեան օսկերէջ Աստուածատուր Ֆրէնկեան վաճառական Գէորգ Արմաճեան օսկերէջ

Սաքիսեան վաճառական Նալիկան Արամաղեան զրազիր Թուրքի Ճերմակեան թիւրքի խաչատուր Պաղտատարեան Կարապետ Եղանաճեան զրազատ Մամուսեան վաճառական

Միսակ Ունեան օսկերէջ Միքայիլ Սիմեոնեան սաղմամարգածի Մաթիկ խաչատուրեան օսկերէջ Մանուկ Ալեքեան սաղմարիջ Միսա Ճափճաֆեան զրազիր Միքայիլ Ալեքեան չուհաճի Յակոբ Մաղլանեան ժամադործ

» Ունեան Պէյազճի » Պոնտիկեան պաշտօնեայ Բ. Դրոն » Ճիլմէճեան ժամադործ Յովակիմ Սաքեան Եղանաճի Նշան Դորանեան զրազիր Ռուբէն Լօբանկէօղեան քաղաղ Ռաֆիկ Բարաքալեան սարապի Սարգիս Մերոնեան սրմաբէջ Ստեփան Բապուճճեան ժամադործ Քերովիջ Տէրմէճեան վերլիսաճ

Ընտրողը ազատ են այս ցանկէն դուրս թաղեցւոց ալ քուէ տալ: Վերջիկեալ 27 անձերէն միայն 9 անձ ընտրելով պէտք է քուէն անձամբ յառաջիկայ կիրակէ օր երեք 'ի խորհրդարան տուր եկեղեցւոյս: Իսկ եթէ ստիպուած կան պատճառաւ չկարենոյք գալ, նամա կաւ մը փողոցը տանք թիւր նշանակելով և ստորագրութիւն դնելով քուէ զթիւր նիւր ներկայեալ ծանօթ անձի մը միջոցաւ խրկել առ ընտրողական ժողովն Եկեղեցւոյս:

Քուէ արկութիւնն առաւօտեան ժամը 1 ին սկսելով պիտի աւարտի 5 ին, և անմիջապէս քուէ համար սփռի կատարուի: Ա. Անդրեանի է այն քուէն եթէ նամակը առանց ստորագրութեան ըլլայ. Բ. Անդրեանի է այն քուէն եթէ քուէ զթիւն տակ ստորագրութիւն ըլլայ. Գ. Անդրեանի է այն քուէն եթէ որդեալ ժամէն ետքը դայ, միանգամայն ծրար ծրար խրկուած քուէներն իսկ:

Կիտուրութիւն ունեցողները սարսփն մինչև յառաջիկայ ուրբաթ՝ երկու կամ անձամբ խորհրդարան գալ կամ նամակաւ ուղղել դայն առ Ընտրողական ժողովոյ նախագահն: Յայտնի է որ այս պայմանները զանց ընող քուէ արկուն իրաւունք չպիտի ունենայ յետոյ բողոքելու: 1878 փետր. 23 Միամ աղօթարար Եկեղեցարու Հայեալ Հրապ. Դիմաւեան

ԼՍԱՐԱՆ

ԸՆԹԵՐՑԱՍՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
1878 մարտ. 5 ուրբաթ գիշեր ժամ 2 1/2
Ի Թատրոն Բարեւեր ընկերութեան յօրհանդէս

ՄԱՍՆ Ա.

Ազգային երգ (դաշնակի ձայնակցութեամբ) աշակերտք Հայկ. Կրթ. Ծիծեռնակ Նուադ (դաշնակի վերայ).—Օր. Նարդոս Կիլեոս Թէլ Բացումն Լսարանի. —Պ. Յ. Գուրգէն

ՄԱՍՆ Բ.

Ազգային երգ.— (նոյնը) Ինձ համար չէ Նուադ.— (նոյնը) Կրանտ քարիս հօնկրուադ Բանախտութիւն.—Հ. Կղեմէս Վ. Ար. պիւրեան

Մուտքն ազատ է երկու սեռի համար, իսկ օթեկաց դին որդուած է մէկ հինգունոց թիւի պարամ:

Ի Լ Ա Ն

Տօքսան իւշ սէնէսի շուպաթընըն իկիրմի սէքիլինճի կիւնտէ իհայէի զաթիէսի ինճա օրուճաճաղը էլլէճէ լւան օրուճաճա օրան մաշալը մալլուճէ սէքի չէքի բուսուճընըն սօքսան սէօրթ սէնէսի մարաթընըն տէօրտիւնճի ճուճա իրթէսի կիւնիւնէ թէէիլիլ օրուճաճա օրուճընտան, թալլալլօրան լարըն էէվիլ մէգըիւրտէ չէճիլ էսա նէթի մէճիլի չէլիսիւնէ միւրաճաւ թի իլլէմէլլիլ թէքալը իլան օրուճաճա:

8 Բէպիւլ էվիլլէ

ჟამი	ჟამი	ჟამი	ჟამი
1	7	1 20	8
1 30	8 45	1 45	8 30
2	8 40	2 15	9
2 30	9 15	2 35	9 30
2 50	9 45	3	10
3 10	10 5	3 20	10 20
3 35	10 30	3 45	10 40
4	10 45	4	11
4 30	11 5	4 45	11 20
5	11 25	5 15	11 40
5 30	11 40	5 40	11 50
6	12	6 15	12 5
6 30		7	